ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Հետազոտող ուսուցիչ՝

Վարդանյան Գյուլնարա

Մենթոր ուսուցիչ՝

Արմինե Անտոյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԹԵՄԱ՝ .

Ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Բովանդակություն

- Ներածություն
- Թեմայի արդիականությունը
- Հետազոտության օբյեկտը
- Հետազոտության առարկան
- Հետազոտության նպատակները
- Հետազոտության խնդիրները
- Հետազոտության մեթոդները
- Եզրակացություն
- Գրականության ցանկ

Ներածություն

Նախաբան

Հետազոտական աշխատանքի համար ընտրվել է «ուսուցիչ –ծնող- դպրոց » թեման քանի որ այն համարվում է արդիական:

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ:

Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:

Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը:

Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին

Թեմայի արդիականությունը

- Ծնողները կարևոր դեր են խաղում որդու ուսման գործընթացում.
- Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.
- Ծնողները զավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում գործում:
- Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա:
- Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը:

● Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը:

● Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ:

● Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել:

● Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը շատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

Հետազոտության օբյեկտը

Դպրոց- ուսուցիչ-աշակերտ-ծնող փոխադարձ կապն է

Հետազոտության առարկան

Ժամանակակից տեղեկատվական ,մանկավարժական, տեխնոլոգիական մեթոդները և ծնողի կապը դպրոցի հետ կնպաստեն աշակերտների ճիշտ ուսուցմանը և ձեռք կբերեն գիտելիքներ,կունենան ճիշտ կենսակերպ և կպահպանեն իրենց առողջությունը:

Ծեռք կբերեն հայրենասիրական ճիշտ դաստիրակություն:

Հետազոտության նպատակները

●Ուսուցչի կողմից ուսումնական հաստատության կանոնադրության ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարման անհրաժեշտությունը:

●Երեխայի ճիշտ դաստիրակությունը կհանգեցնի `

ազնվության

հայրենասիրության

պատասխանատվության

փոխադարձ հարգանքի

հանդուժողականության

ընկերասիրության

- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն:
- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի:

Հետազոտության խնդիրները

Այսօրվա արդի ժամանակներում երեխայի ճիշտ դաստիարակության համար խիստ անհրաժեշտ է ծնողի ներգրավածությունը ուսուցման գործընթացում:

Վատ սովորույթները ,որոնք առկա են մեր ժամանակներում(թմրամոլություն, ալկոհոլ) իրենց բացասական ազդեցությունը չթողնեն երեխայի դաստիարակության վրա:

Հետազոտության մեթոդները

- Տեսական և փորձնական աղբյուրների հետազոտություն:
- Թեմայի վերաբերյալ նյութերի մշակում և համակարգում:
- Փորձի նկարագրում, իրականացում,դիտարկում ,ներկայացում,եզրահանգում:

Հետազոտական նյութը՝

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ:

Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:

Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը:

Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:

Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը:

«Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին: •

Ծնողները կարևոր դեր են խաղում որդու ուսման գործընթացում.

Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.

Ծնողները զավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում գործում:

Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն:

Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա:

Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը:

Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա:

Ստորև քննարկում ենք յուրաքանչյուր խմբի օգուտը. Օգուտ աշակերտին:

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում,, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.

Ծնողների հետ համատեղ ընթերցանությունը երեխայի մեջ կարթնացնի սեր գրքի նկատմամբ:

Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է. :

Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն:

Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ:

Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ:

Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը :

Օգուտ ուսուցչին ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:

Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ. :

Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից:

Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին:

Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

Օգուտ դպրոցին ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս:

Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի:

Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ:

Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել:

Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը ճատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

ՈՒսումնասիրությունը հաստատեց դպրոցների աջակցման անհրաժեշտությունը ծնողների ներգրավվածության ուղղությամբ:

Դպրոցները իդեալական կրթօջախ չեն, և դպրոցականները այսօր բախվում են այնպիսի դժվարությունների, որ մի քանի տասնամյակ առաջ նույնիսկ գոյություն չեն ունեցել:

Սակայն, ծնողնե՛ր, ձեր օգնությամբ երեխաները կարո՛ղ են հաջողությունների հասնել դպրոցում:

Կրթությունը պետք է օգնի երեխային դառնալու պատրաստված և պատասխանատվության զգացում ունեցող անձնավորություն:

Ծնողների կողմից նույնպես ողջամիտ չի լինի պահանջել երեխաներից կատարել այնպիսի պարտականություններ, որոնց նրանք դեռ պատրաստ չեն:

Երեխաների մեծանալուն զուգընթաց ծնողները պետք է որոշեն, թե ինչ հանձնարարություններ կարող են նրանք անել:

Օրինակ՝ պետք է սովորեցնեն նրանց հետևել անձնական հիգիենային, իրենց սենյակի մաքրությանը, լինել ճշտապահ և չվատնել փողը:

Երբ երեխան դպրոց գնա, ծնողները պետք է օգնեն նրան մեծ պատասխանատվությամբ մոտենալու իր տնային հանձնարարություններին:

Սակայն հանձնարարություններ տալուց ավելին է հարկավոր անել։ Ծնողները պետք է օգնեն երեխային, որ կատարի դրանք։

Եթե միշտ պաշտպանես երեխաներիդ խնդիրներից, ապա, փաստորեն, թույլ չես տա, որ նրանք սովորեն ինքնուրույն հաղթահարել կյանքի դժվարությունները։

Փոխարենը՝ քաջալերիր նրանց, որ պատասխանատվություններ ստանձնեն։

Եթե այդպես վարվես, ամենաթանկ պարգևներից մեկը կփոխանցես նրանց։

Շատ ծնողներ էլ սովորեցնում են իրենց երեխաներին, որ ուրիշների շահերը իրենց շահերից բարձր դասեն։

Արդյունքում օգուտները շատ են լինում։

Այն երեխաները, ովքեր հոգատար են, ընկերներ են ձեռք բերում և մարդկանց հետ կարողանում են կայուն փոխհարաբերություն հաստատել։

Շատ հայրեր ու մայրեր սկսում են գովասանքի խոսքերով հեղեղել երեխաներին, անգամ երբ նրանք գովեստի արժանի հատուկ ինչ-որ բան չեն արել։

Յուրաքանչյուր «սխրանք» տոնվում է, անկախ նրանից, թե որքան փոքր է, իսկ յուրաքանչյուր սխալ անտեսվում է, անկախ նրանից, թե որքան մեծ է։

Այդպիսի ծնողները մտածում են, թե ինքնահարգանք զարգացնելու գաղտնիքը այն է, որ անտեսես վատը և գովաբանես ամեն բան։

Ոմանց համար շատ ավելի կարևոր է երեխաներին լավ զգացողություն պարգևել, քան նրանց սովորեցնել անել բաներ, որոնց համար *նրանք հետո լավ կզգան։*

Եթե երեխային գովես զուտ այն պատճառով, որ նա իրեն լավ զգա, ապա նրա մեջ իր «ես»-ի նկատմամբ աղավաղված տեսակետ կզարգանա։

Ուստի ծնողներ հետ պարբերաբար պետք է հանդիպումներ կազմակերպել և անցկացնել զրույցներ։

Նպատակ դիր ուղղելու երեխային, երբ անհրաժեշտ է, և գովելու այն ժամանակ, երբ իրոք արժանի է դրան։

Մի՛ գովիր նրան զուտ այն բանի համար, որ իրեն լավ զգա։

Պետք է ծնողին և երեխային հշեցնել ուշադրություն դարձրու քո վարվելակերպին `մեծերին դիմելիս հարգալից եղիր,հաճախ օտագործիր «խնդրում եմ», «շնորհակալություն» կամ «կներեք» բառերը։

Հարգանքով վերաբերվիր ծնողներիդ և ընտանիքիդ մյուս անդամների հետ։

Ծնողներին պետք է զգուշացնել ,որ երեխաներին տնային գործեր հանձնարարելը կարևոր է ոչ միայն տունը կոկիկ և բարվոք վիճակում պահելու, այլև երեխայի անձնավորության ձևավորման համար։

Որոշ ծնողներ վարանում են երեխաներին տնային գործեր հանձնարարել, հատկապես այն դեպքերում, երբ երեխայի ողջ շաբաթը արդեն իսկ հագեցած է տնային առաջադրանքներով և տարբեր արտադասարանային պարապմունքներով։

Բայց եկեք տեսնենք, թե ինչ օգուտներ է բերում երեխային տնային գործեր հանձնարարելը:

Օգնում է, որ երեխան հասուն անհատ դառնա։

Այն երեխաները, որոնք տնային գործեր են անում, որպես կանոն, ավելի լավ են սովորում դպրոցում։

 Եվ դա զարմանալի չէ, քանի որ տնային գործերում օգնելով՝ նրանք վստահություն են ձեռք բերում, ինքնակարգապահ են դառնում և զարգացնում են կամքի ուժ՝ հատկություններ, որոնք անհրաժեշտ են լավ սովորելու համար:

Երեխան սովորում է ծառայել ուրիշներին։

Նկատվել է, որ այն երեխաները, ում ծնողները ակնկալում են, որ նրանք օգնեն տան հետ կապված գործերում, հետագայում ավելի պատրաստակամ են լինում կատարելու հանրօգուտ կամավոր աշխատանքներ։

Եվ սա միանգամայն տրամաբանական է, քանի որ տնային գործեր անելով՝ նրանք սովորում են ուրիշների շահը սեփական շահից վեր դասել։

Մյուս կողմից, սակայն, ինչպես ասում են, «երբ երեխայից ոչ մի ակնկալիք չեն ունենում, նա սկսում է մտածել, թե ինքն աշխարհ է եկել, որ իրեն ծառայեն։

Եվ մեծանալով՝ նա սխալ պատկերացում է ունենում այն մասին, թե պատասխանատվություններ ստանձնելու և աշխատասեր լինելու հարցում իրենից ինչ է ակնկալվում կյանքում»:

Նպաստում է ընտանիքի միասնությանը: Տնային գործեր անելով՝ երեխաները սկսում են գիտակցել, որ իրենք ոչ միայն ընտանիքի սիրված ու կարևոր անդամ են, այլ որ իրենք էլ պարտավորություններ ունեն ընտանիքի հանդեպ։

 Ի՞նչ նշանակություն ունի ծնաղական ժողովները:

Կա մի հին դպրոցական աֆորիզմ. “երեխաների հետ աշխատելիս ամենադժվարը մեծերի հետ աշխատելն է”:

Շատ դժվար է դասվարի համար շփվել հայրիկների և մայրիկների մեծ խմբի հետ ծնողական ժողովներում:

Եվ ակամայից հարց է ծագում. իսկ ընդհանրապես պե՞տք են այդ-
պիսի ժողովները, թե՞ դրանք արդեն կորցրել են արդիականությունը և
անցկացվում են զուտ սովորույթի ուժով:

Այն ճնշող տեսքով, որով ծնողական ժողովները գոյատևում են ար-
դեն երկար տարիներ, կարելի է ասել, որ պարզապես պետք չեն:

Գաղտնիք չէ, որ որոշ դասվարներ ընդհանրապես չեն պատրաստվում ծնողա-
կան ժողովներին:

ԵՐԵԽԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ

Առաջին հերթին հարկավոր է արագ ստանալու համար այնպիսի
տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են երեխաների հետ աշխատելիս.
այսպես ասած՝ տեղեկություն "առաջին աղբյուրից":

Հայտնի է, որ ով գիտի կարևոր տեղեկություններ երեխաների մասին, նա էլ
տիրապետում է դաստիարակչական իրավիճակին:

Դասվարի համար այդպիսի տեղեկությունները նրա մասնագիտական
հարստությունն են, որոշումներ ընդունելու հիմքը:

Այդ առումով ցանկացած ժողովի համար անհրաժեշտ է
նախապատրաստել ծնողներին տրվող հարցեր:

Օրինակ, ուսումնական տարվա սկզբին կարելի է առաջարկել մոտավորապես
այսպիսի հարցաթերթիկ.

- հաճույքո՞վ է ձեր երեխան գնում դպրոց,

- ձեր երեխայի հիմնական մարդկային առավելությունները, նրա լավա-
գույն գծերը և ունակությունները,

- ձեր երեխայի թերությունները, թուլությունները,

- ո՞ր առարկաներն է նա հետաքրքրությամբ ուսումնասիրում,

- ո՞ր առարկաները չի սիրում, անտեսում է,

- ձեր երեխան ունի՞ մշտական տնային պարտականություններ: Որո՞նք
են,

- ձեր երեխան ի՞նչ ռեժիմով է ապրում տանը,

- ինչո՞վ է սիրում զբաղվել ձեր երեխան տանը ազատ ժամանակ:

Այս հարցերը պայմանական են, յուրաքանչյուր դասվարին հետաքրքրում է իր շրջանակը:

Իհարկե, ծնողների պատասխաններից չի կարելի սպասել լիովին անկեղծություն, բայց ցանկացած դեպքում դրանք
կարևոր տեղեկություններ են և մտածելու տեղիք են տալիս:

Դպրոցը կենդանի օրգանիզմ է, և նրա գործունեության մեջ բնական են տեսանկյունների, երեխաների հանդեպ առաջադրվող պահանջների, աշխատանքային ռեժիմի, ուսումնական չափորոշիչների փոփոխությունները:

Ասենք, նոր փաստաթղթեր են ստացվել ավարտական քննությունների վերաբերյալ, մանկխորհուրդը որոշում է ընդունել սպորտային համազգեստի վերաբերյալ, փոփոխվել են երկարօրյա մնալու պայմանները:

Այս ամենի մասին, մանավանդ մեր փոփոխական, ոչ կայուն ժամանակներում, պետք է տեղեկացվեն ծնողները:

Որոշ հարցեր պետք է դրվեն վարչականորեն, մյուսների առնչությամբ ստանալ ծնողների համաձայնությունը կամ հաշվի առնել նրանց կարծիքը:

Շատ օգտակար են այնպիսի ժողովները, որտեղ դասվարը ծանոթացնում է ծնողներին վերլուծական նյութերի հետ, քառորդի արդյունքների հետ, դասերից բացակայելու պատճառների,ընթերցանության հետաքրքրությունների մակարդակի և դրա աճի, երեխաների բժշկական հետազոտությունների արդյունքների, իրավախախտումների մասին:

Բայց, թող որ դա լինի միայն վերլուծական նյութ, առանց փաստերի, երեխաների կամ ծնողների անուն, ազգանունների:

Հարկավոր են լինում նաև խորհրդատվական ժողովներ երեխաներին ամառային արձակուրդների ժամանակ :

Օրինակ, դասվարը որոշում է ընդունել անցկացնել երկարատև տուրիստական արշավ, էքսկուրսիա, կոլեկտիվ ծննդյան տոն:

Նրան հարկավոր է ստանալ բոլոր ծնողների խորհուրդը, հավանությունը, աջակցությունը:

Բայց դրանք պետք է լինեն միայն խորհրդատվություններ, որոնք հարստացնում են ծնողների մանկավարժական փորձը, այլ ոչ թե պահանջ:

Երբեմն խիստ անհրաժեշտություն է առաջանում հավաքել բոլոր ծնողներին կամ նրանց մի մասին՝ արտակարգ իրավիճակի, դժվար կամ վիճահարույց պատահարի քննարկման համար:

Եվ, վերջապես, անհրաժեշտ են ժողովներ, կապված առանձին երեխաներին և նրանց ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին, միայնակ մայրերին, հիվանդ երեխաներին օգնություն ցուցաբերելու հետ:

Այդպիսի ժողովները պահանջում են շատ զգույշ մոտեցում և տակտ, և իրենց ոճով պետք է շատ նրբանկատ լինեն:

Ոչ թե մենախոսություն, այլ երկխոսություն յուրաքանչյուր ժողով պահանջում է իր "սցենարը", իր ծրագիրը:

Անհրաժեշտություն կա հստակեցնել մի շարք ընդհանուր դրույթներ:

Ներկայացնենք դրանցից կարևորները:

Եթե մենք երբեմն հավաքվում ենք միասին ընդհանուր ժողովի, որը ավելի նպատակահարմար է անվանել՝ ընկերների, գործընկերների հանդիպում, ապա ժողովի վարման առաջատար մեթոդը պետք է լինի երկխոսությունը:

Անշուք, հերթապահ մենախոսության ժամանակներն
անցել են, իսկ երեխաների դաստիարակությանը նպաստող հաղորդակցման արդյունավետ ձևը երկխոսությունն է, այսինքն միմյանց լսելու, տարբեր կարծիքներ ու փորձ հարգելու ունակությունը:

Ցանկացած ծնողական ժողով պահանջում է նախնական պատրաստվածություն:

Այն ծնողները, որոնց հետ մանկավարժը հաստատել է վստահելի հարաբերություններ, չեն խուսափի ասել ուսուցիչներին իրենց սեփական սխալների մասին, կարող են
հուշել երեխաների դաստիարակության հետ կապված ռազմավարության և մարտավարության կարևոր հարցեր, տալ անսպասելի լուծումներ:

Տեղեկատվության հարցում կարևոր դեր ունեն նաև երեխաները:

Կարելի է նրանց տալ տնային շարադրություններ:

Օրինակ, առաջարկել գրել շարադրություն հետևյալ թեմայով. "Իմ ծնողները", կամ "Դպրոցականներն իրավունք ունե՞ն դատել իրենց ծնողներին":

Բայց պետք է հաշվի առնել, որ այդպիսի շարադրությունները պահանջում են պատշաճ էթիկական մոտեցում, աշակերտների "գաղտնիքների" հանդեպ վստահություն և հարգանք:

Երեխաները բավականին բաց են, նրանք կարող են
պատմել իրենց ընտանիքի մասին ամեն ինչ, արտահայտել իրենց նեղվածությունը ծնողներից, և նրանց անպայման պետք է նրբորեն հուշել, որ

մայրը և հայրը բոլոր արժեքների չափանիշ են հանդիսանում, որ քննադատելով ծնողներին, պետք է նախ և առաջ ինքներդ ձեր մեջ փնտրեք չհասկանալու և կոնֆլիկտի պատճառները:

Բոլոր ծնողները դպրոցից մի փոքր քաշվում են, նրանցից շատերը բավարարված չեն իրենց ու երեխաների հարաբերություններից:

Ոմանք դպրոց են գալիս լարված, անտրամադիր իրենց երեխաների ուսումնական և վարքային ցուցանիշներից, հասկանալով, որ կարող են լսել /նաև հրապարակավ /տհաճ հայտարարություններ և բողոքներ ուսուցիչների կողմից: Այդպիսի լարվածությունը պետք է չեզոքացնել:

Ծնողները հենց առաջին իսկ րոպեից պետք է զգան հարգանք դեպի իրենց անձը, համոզված լինեն որ, անտակտ խոսակցություններ տեղի չեն ունենա, որ նրանք մշտապես ուսուցիչների համախոհներն ու աջակիցներն են:

Ծնողական ժողովը ոչ միայն ընտանիքի և դպրոցի կապի միջոց է, այլև կարևորագույն մանկավարժական տեղեկությունների համալսարան է, երեխաների հետ հարաբերությունների ու աշխատելու լավագույն փորձի տարածման ամբիոն:

Դպրոցն ու ընտանիքը ունեն միևնույն խնդիրները:

Եվ ծնողների ու ուսուցիչների հանդիպումների խնդիրն է գտնել դրանց լուծման ճանապարհները:

Մեզ բոլորիս անհրաժեշտ է սովորել ծնողների հետ խոսել, նրանց հետ գործեր վարել:

Նրբանկատություն և տակտ է հարկավոր որոշակի տարօրինակություններ, առողջական խնդիրներ, արատներ, կակազող երեխաներ, խոսքի արատներ և այլ դժվարություններ ունեցող երեխաների մասին խոսելիս:

Առավել զգույշ է պետք լինել որբ և միակողմանի ծնողազուրկ երեխաների պարագայում:

Դպրոցական կյանքը բերում է այն համոզմունքին, որ ծնողական ժողովները միայն այն ժամանակ են հասնում իրենց նպատակին, երբ առկա է կողմերի փոխհասկացողությունը, երբ դրանք աշխույժ ընթացք են ունենում, առաջանում են հարցեր, բանավեճեր, կարծիքների բազմություն և փորձի փոխանակում:

Իհարկե, շատ բան դասվարն ինքը կարող է լուծել, բայց ավելի լավ է, երբ նրան օգնության են հասնում դպրոցի տնօրենը, փոխտնօրենը, արտադասարանային աշխատանքների փոխտնօրենը, գրադարանավարը, առարկայական ուսուցիչները:

Ծնողական ժողովը դպրոցի բոլոր աշխատակիցների ընդհանուր գործն է:

Նրանք կարող են պատասխանել ծնողների հարցերին, տալ անհատական խորհուրդներ, հանդես գալ արդիական խնդիրների կապակցությամբ,

օրինակ՝

"Ինչպե՞ս ավելի լավ հսկել երեխայի առաջադիմությունը",

"Ձեր երեխաների գրպանի գումարը",

"Նվիրե՞լ երեխային դրամապանակ",

"Երեխաների և ծնողների համատեղ հանգիստը",

"Դեռահասների տարօրինակ վարքագիծը",

"Համակարգիչը երեխայի կյանքում"

, "Ինչո՞ւ են երեխաները խաբում",

"Խրախուսումն ու պատիժը որպես երեխայի դաստիարակության մեթոդ ընտանիքում",

"Հնազանդ երեխա: Արդյո՞ք միշտ է, որ հնազանդ երեխան լավ է":

Այս ամենը, այսինքն այս խնդիրները դառնում են ծնողական ժողովի թեմաներ:

Ժամանակակից դպրոցը չպետք է վախենա քննադատություններից:

Առաջավոր դպրոցը ընդունակ է պատասխանել քննադատությանը ոչ թե "խուլ պաշտպանությամբ", այլ կոնկրետ գործերով:

Իսկ առողջ քննադատությամբ հետադարձ կապն ամրապնդողները ծնողներն են, սակայն, բանն այն է, թե ինչպես նրանք կօգտագործեն քննադատությունը և ինչպես դա կընդունի դպրոցը:

Քաղաքակիրթ դպրոցը ուսուցիչների, ծնողների, հասարակայնության, տարբեր մշակութային կենտրոնների, դպրոցականների և ուղղակի մասնակիցների միավորումների ժողովրդավարական, վստահելի միություն է:

Միություն, որն ունի ստեղծագործական շփումների և համատեղ հումանիտար գործունեության ռեալ ծրագիր:

Ուսուցիչների և երեխաների հետ միասին երկրում ու իրենց երկրամասում երկարատև արշավներում, էքսկուրսիաներում և ճամփորդություններում, "արձակուրդային հանրապետություններում" օրինական իրավունքներով ներառվում են նաև ծնողները:

Ծնողները դպրոցական բոլոր միջոցառումների, արտադասա-
րանային գործերի, ակումբների, սպորտային մրցումների, ավարտական պարահանդեսների ակտիվ մասնակից են:

Ոչ թե դիտորդ են, այլ մասնակիցներ, որոնք կոնկրետ ստեղծագործական դեր են կրում:

Ի՞նչն է կարևորը ընտանիքի հետ համագործակցելիս:

Ընտանիքի համար առաջնային խնդիրների հստակեցումը և հասկացությունը. երեխաների առողջությունը, կոլեկտիվում կոմֆորտային դիրքը, առաջադիմությունը ուսման մեջ, պաշտպանվածությունը և այլն:

Երեխաներ, ծնողներ, ուսուցիչներ՝ երեք սոցիալական ուժերի միություն:

Համախմբվածությունը՝ ընդհանուր հարստությունն է:

Դպրոցի և ընտանիքի լավագույն ավանդույթների պահպանումը՝ մանկավարժների և ծնողների գործունեության ընդհանուր խնդիրն է:

Կա այսպիսի ասացվածք՝ "Բոլոր երեխաները մերն են":

Մեկ երեխայի դաստիարակության մեջ արված բացթողումները անպայման կազդեն մյուսի զարգացման վրա:

Եկել է երեխաների, ծնողների և մեր՝ ուսուցիչների դաստիարակչական համագործակցության, ընկերակցության և համաստեղծագործության նոր սկզբունքների հաստատման ժամանակը:

Իսկ կարևոր սկզբունքն այն է, որ երեխաները պետք է իրենց լավ զգան թե' տանը և թե' դպրոցում:

Մանկավարժը չպետք է մտածի, որ աշխատելով ծնողների հետ միասին, նա կարող է և պետք է նրանց "ձևափոխի":

Նա կարող է օգնել նրանց փոխել իրենց վերաբերմունքը դաստիարակության հանդեպ:

Դասղեկությունը աշխատանք չէ, այլ՝ կյանքի ձև

Եզրակացություն

- Ուսուցչի և ծնողի համագործակցումը միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը:
- Աշակերտները աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ :

Գրականության ցանկ

- Մ.Ի. Բաղդասարյան `«Ընտանիք ,դպրոց»
- Անահիտ Արնաուդյան,

  Գայանե Բեդիրյան`«Տանը և դպրոցում»
- Ձեռնարկ`

  «Տեղեկատվական տեխնոլոգիաներ տարրական դպրոցում»
- Ի. Պարֆենովա, Է.Կազակովա `

  «Ընտանիքի և դպրոցի համագործակցության կազմակերպում»

Հարցե՞ր

_Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը:

_ Ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»

:Շնորհակալություն